

H. PALAKACHIAN, Directeur - Rédacteur
de la Revue Hebdomad. „MÉGHOU“,
171, Rue Kabristan, Péra, CONSTANT/PLE

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Փոստովան՝ տարեկան 250, վեցամսեայ 125 դր.
Եւրոպայ՝ — 60 ֆրանք.
Ամերիկայ՝ — 3 Զոլար.

Ա. ՏԱՐԻ

Թիւ 9

1927

ՅՈՒՆԻՍ 28

Հասր 5 դրու.

مَكْفُوف

صاحب و مدير مسئول هوونان پالاقشيان

استانبول بك اوغلى قبرستان سوقاق نومرو ۱۸۱

Ursoliuska, knjiptarica i. Krasavica. Sforck

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Կ.ՊՈԼԻՍ, Բերս, Գալստիանսի փողոց, քիւ. 171

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տողը 10 դրու.

Չստանալ գումարիս
քիւնք չեն վերստ
դարձուի:

Հասր 5 դրու.



Կը հրատարակուի ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը

ԱՂՏՈՏ ԵՒ ՏԳԵՂ ԲԱՐՔԵՐ

Մեր համայնքի գործերու մէջ ի՞նչ տեղաւորուեցաւ, ի՞նչ աղտոտութիւններու կը հանդիպեմք յաճախ: Իրեւ թէ հանրութեան օգտին համար գործի կը լծուին, եւ ահա՛ սուաչին վայրէկանէն իսկ, գործը լիաժ, կը զբաղին անձնակազմութեամբ եւ կը զբաղեցնեն իրենց «ես» ով: Ժողովներու մէջ, փառքի համար կամ որ եւ է նպատակաւ դիւր բռնել, ազդեցութիւնն ձեռք բերել ու զողներ միջոցներու մէջ խտր չեն դնել: Ժողովի անդամակցութեան ալ՝ օրինաւոր միջոցներով չէ որ կը հասնին յաճախ: Որովհետեւ իրենց արժանիքովն ու շահուած համարումով մը ընտրուելու յոյս չունին, շխարհի միջոցներու կը դիմեն. օրինակ՝ կ'աւելանան ընտրուելու հաւանականութիւնն ունեցող ուրիշ ընտրելիներ «սեւացնելու», որպէս զի մէջեղն իրենք կամ իրենցները մնան ընտրելի եւ իրենց նպատակին հասնին: Մարդիկ ալ կան որ այս միտելոյն դերը կը խաղան վարագործին ետեւէն, ուրիշներուն տուն տալով: Այսպիսի աղտոտ դեր մը չը խաղցուե՞ցաւ նոյն իսկ վերջին պատր. ընտրութեան մէջ: Ուրիշ խնդիր որ այս աղտոտութիւնն ի գործ դնող եկեղեցականը չի կրցաւ իր ընտրութիւնն յաջողցնել, քանի որ ինքն իսկ իրապէս եւ խորապէս վարկաբեկուած էր իր գործերովն իսկ, այն աստիճան որ իր թմբկահարներն անգամ չի համարձակեցան իրենց կողմին անունը բերան առնել վերջին պահուն, եւ ստիպուեցան տեղի տալ հակահոսանքին առջեւ:

Նոյն եւ նմանօրինակ աղտոտ քարերու կը հանդիպեմք նաեւ մեր շուս մը համայնքի գործերու մէջ: Բազմաթիւ փաստեր կարելի է յառաջ բերել բայց ի՞նչու հետումները երբանք. ահաւասիկ Ֆէրի-գիւղը որ մեր ըսածին ամենաբարձր ապացոյցը կը հայթայթէ:

Այս շուս խօսուած քաղի մէջ Թաղ. Խորհրդոյ ընտրութեան ձեռնարկուած է այս օրերս: Կազմուած է Հնչոյ. Ժողով մը, որ Առժմե. Թաղ. Խորհրդոյ հետ միասին, ընտր. գործը պատրաստելու եւ ընտրութեան օրինաւորութեան հսկելու պատշոնն ունի իբր թէ: Բայց այս միացեալ մարմինն սուաչին օրէն իսկ՝ փոխանակ իր բարձրութեան վրայ մնալու, կը միտի ցածերն իջնելու: Նախ, ընտրելիներու եռապս. ցանկի պատրաստութիւնը՝ փոխանակ գաղտնի փութով կատարելու, Ժողովին անդամներուն առաջին մտահոգութիւնը կ'ըլլայ էն սուաչ իրենց անունները գետեղել ցանկին մէջ: Երբ կարգը կուգայ ընտրելիներու 24 թիւը լրացնելու համար մնացեալ ընտրելիները որոշելու, Ժողովին մէկ ազնուական անդամը՝ արտասանուած անունի մը շուրջ կ'ըս-

կըսի աղմկել՝ անոր ընտրելի նշանակուիլն արգիլելու համար, առարկելով թէ այդ անձը կոռուական է եւ գրող ու քննադատող: Միւս անդամները՝ այս բարբառաբանութեան հանդէպ լուռ մնալու չափ առաջ կը տանին ազնուութիւնը, փոխանակ դիտել տալով թէ, հաւատարմութեան տեսան չէ այդ ժողով եւ թէ բացակայ անձի մը մասին բարձրագոյն ու անտեղի բարբառաբան ուղիղ չեն համեմատել ո՛չ պարկեշտութեան, ո՛չ պատշաճութեան եւ ո՛չ ալ ազնուութեան հետ: Եւ այսպէս ընտրելիներու ցանկէն դուրս կը ձգուի երթակային անունը, ինչպէս նաեւ ուրիշ անձի մ'անունը, առարկուելով թէ կոռուական մըն ալ ան է, մանաւանդ թիւ 1 կոռուականին ազգական ալ է:

Խնդրոյ առարկայ անձը բնաւ երբեք պատշոնի հետամուտ չէ եղած եւ չէ, նախ՝ անձնական զբաղումներուն, երկրորդ՝ տիրող մտայնութիւններու եւ բարբառաբան հետ նոյնանալու ինքզինքն անկարող զգալուն համար: Հետեւաբար իսպառ կարեւորութենէ զուրկ է իրեն համար՝ ցանկին մէջ մտնելը կամ ո՛չ: Բայց խնդիրը հոս չէ. Երբ որ եւ է ոչնչութիւն մը ինքզինքին կը ներէ՝ պատշոնական ժողովի մէջ՝ հակառակ ամէն պատշաճութեան՝ կոռուական հոչակել մէկը որ իր ամբողջ կեանքին մէջ ամէն բանէ աւելի կոռուականութենէ խորեւած եւ խուսափած է, այդ է միայն որ ցաւ կը պատճառէ այդ լմկին: Ան, այո՛,

կը գրէ, կը ձողկէ ու կը փնտաւաւտէ: Բայց ի՞նչ եւ ի՞նչ փնտաւաւտութեան նիւթեր: Ի վրաս Ազգին գործուած զեղծումներ, ապօրինութիւններ եւ չարաւանութիւններ: Ուրիշ: Ուրիշ ոչինչ:

Այդ, խորհիմք քիչ մը: Չեմ ուզեր որ Թաղ. Խորհուրդոյ մէջ արքա ունենայ մէկը՝ որ աչք ունի ու կը տեսնէ. ախտն ունի ու կը լսէ, լեզու ունի ու կը խօսի, գրիչ ունի եւ կը գրէ: Ինչո՞ւ համար չեմ ուզեր: Ի՞նչ մեկնութիւն կուսա՞ւ ասոր: Ասիկայ կը նշանակէ որ կը վախճան անոր ներկայութենէն: Ասիկայ կը նշանակէ որ ապօրինաւորութիւններ, զեղծումներ, չարաւանութիւններ մասնաւոր եւ զանոնք արգիւտ մարդ չեմ ուզեր կազմուել թաղ. Խորհուրդ մէջ: Ասիկայ կը նշանակէ թէ, յետին մեքենով քաղաքի ըլլալ ուզող մարդիկ կան, որոց հանդէս չը թուիր զեղծումներու, ապօրինաւորութեանց եւ չարաւանութիւններու չը հանդուրժող, իրենց հետ չը միացող եւ *օճախ* չկազմող անձերու ներկայութիւնը, եւ կ'ուզեն ամէն գնով արգել ըլլալ այդպիսիներու ընտրութեան, իբրեւ «կոռազան» ներկայացնելով զանոնք: Տարբեր մեկնութիւն կրնա՞յ տալ այդ պարուններու ընթացքին: Այլապէս, ինչո՞ւ կրնան արդարացի իրենց անպատշաճ ընթացքն հանդէպ մէկու մը որ իր ամբողջ կեանքն Ազգին օգտին համար աւելանելով անցուցեր է իբրեւ ուսուցիչ, իբրեւ ներդրող-հրապարակազիր, եւ այլն, եւ որ կռուազանութենէ հեռու, համեմատութեան կուտակից եղած է միշտ եւ համեմատութիւն հարգած, շատ մը չարիքներու աղբիւր նկատելով անհամեմատութիւնը: Մինչդեռ իր ընտրելիութեան հակառակողներն ո՛չ բարոյական եւ ոչ նիւթական եւ ո՛չ մէկ ծառայութիւն մատուցած են Ազգին, եւ իրենց այս ընթացքով ալ կ'ապացուցանեն թէ կռուազանութիւնը իրենց անձին մէջ իսկ մարմնացած է, քանի որ խնդիր չեղած տեղը խնդիր կը ստեղծեն, եւ այն ալ չար նպատակաւ: Չեմ կրուազաց կոչած անձը համեմատած է միշտ՝ բարի գիտումներու հանդէպ. չէ կրցած համեմատել միայն այն

ասեմ, երբ չարաւանութիւն եւ խաբարայութիւն տեսած է ի վրաս Ազգին: Երբ հոգեւորական ծառայութեան կոչուելու յատկացեալ մարմնով ընտրութեամբ ասիւ, կ'աւելանայ որ չարաւանութեանց արգել հանդիսացող մարդ չի մտնէ այդ մարմնով մէջ, այդ չի՞ նշանակէ որ Ազգին շահէն աւելի յետին մեքենա հանդիսութեանց առարկայ են ընտրական գործին մէջ:

Բայց ի՞նչ երկարենք: Յարմար միայն Ֆէրիգիդի յատուկ չէ, ընդհանուր է: Ֆէրիգիդը իբրեւ մօտաւոր եւ քաղաքի մը յատուկ բերին՝ ցուցադրելու համար աղտոտութիւնը հանրային կեանքի մէջ ժամանակէ մը ի վեր մօտ գտած բարեկեցութիւն: Վաղ Ազգին, երբ ապա աղտոտութիւնները պիտի շարունակուէին այսպէս:

Յ. Գ. Փ.

ԹՕԳԱԹԼԵԱՆԻ

ԼՈԳԱՐԱՆՆԵՐՈՒՆ ԽՆԴԻՐԸ

Տեղապահ եւ Մասնաւորութեան վարչութիւն Թօգաթիւն հաստատութեան հետ պայմանաւորուած էին 150,000 ոսկիով լոգարաններ շինել եւ այդ գումարին մէկ երրորդը Ազգին վճարել տալ, այն լոգարանները որոց համար այն ատեն մասնագէտներ, գրքաւորաբար Յովհ. Եփ. Փափազեան, Գրեցին ու պնդեցին թէ, առ առաւելն 40—45,000 ոսկիով կրնան շինուիլ անոնք: Որով, ըստ Փափազեան էֆէնտիի հաշուոյն, Ազգին վրաս 50,000 ոսկիէն պիտի իջնէր 15,000: Իսկ արդի վարչութեան Ատենապետ Արթուր Եփ. Մաղաթեան Ընդհ. Ժողովոյ մէջ յայտարարեց թէ, լոգարաններու, ինչպէս նաեւ ներկի գործին մէջ, Ազգին ի վրաս կարգադրութիւն մը չի տեսներ:

Այժմ կը յայտարարուի թէ, յանձնառու ընկերութիւն մ'երեւան ելած է, որ սոյն լոգարաններու շինութիւնը 40 — 50,000 ոսկիով պիտի ստանձնէ եղեր. այս գումարին ալ մէկ երրորդը, իբր 15,000 ոսկի պիտի վճարէ եղեր Ազգը:

Ահաւասիկ կ'արդարանան այս խնդրոյ շուրջ երկու տարիէ ի վեր տե-

ղի ունեցած քննադատութիւնները: Տեղապահ եւ Մասնաւորութեան վարչութեան այն ատենի պաշտպաններն ի՞նչ ըսելիք ունին ասոր: 40—45,000 ոսկիով ըլլալիք ծախք մը 150,000 ոսկիով կ'ընդունեն Ազգին, եթէ քննադատողներ մէջտեղ չեղնեն եւ պայքարը ցկեղծ չը շարունակեն, հակառակ պնդողներու, որոնք դժգոհած զեղծումներն ու ապօրինաւորութիւնները պարտկելու եւ պաշտպանելու պաշտօնն ստանձնած էին:

Բայց կայ ուրիշ կարեւոր խնդիր մը, որու մասին ժամանակին Գրեցինք ժամանակի մէջ եւ զոր այժմ կ'ուզենք յիշեցնել:

Շինուելիք լոգարաններու ծախքերուն Ազգն ի՞նչ պարտականութիւն ունի մասնակցելու: Պանդոկին վարձակալը կ'ուզէ լոգարաններ շինել իր հասոյթի աղբիւրն աւելցնելու համար, պարգապէս աւելի գրամ շահելու համար: Արդ, Ազգն ի՞նչ պարտականութիւն ունի գրամադուլ մը շինելու իր վարձակալին տրամադրութեան տակ, որպէս զի ան աւելի գրամ շահէ: Իր շահած գրամէն Ազգին բաժին պիտի հանէ: Ոչ ոք չի կրնար զոհողութիւն ընէ Ազգը վարձակալը պնդողը վարձած է առանց լոգարաններու, եւ առանց այդ լոգարաններու շինութեան ալ՝ պարտաւոր է վարձքերը վճարելու ըստ պայմանագրութեան: Երբ Տեղապահ մը կամ վարչութիւն մը կ'ընէ լոգարաններու շինութեան ծախքերուն մասնակցը ընել Ազգը, ազգապիտան գործ մը կը գործէ: Օրէնքով ալ, Ազգը պարտաւոր չէ այդպիսի ծախքերու մասնակցելու: Երբ վարձակալ մը, կամ իր հաճոյքին եւ կամ իր պէտքերն եւ կամ իր շահուն համար, իր վարձած շինքին մէջ յաւելում մը կամ գետեղում մը կ'ընէ, օրէնքով ծախքերն իրեն կը պատկանին, եւ երբ վարձակալութեան պայմանագրով լրանալուն չէնքը պարպէ, ԻՐԱՆԻՆԻՔ ԶՈՒՆԻ ԻՐ կատարած յաւելումաժախան շինութիւնները քակելու եւ հետը տանելու, այլ նոյնութեամբ պարտաւոր է քողով շինելին, ինքն այդ յաւելումաժախան շինութեանց տէրն ըլլալէ զադրած է: Ուրեմն թո՛ղ չընեն թէ Ազգը այդ լոգարաններու շինութեան

ծախքերուն անոր համար կը մասնակցի, որովհետեւ անոնք իրեն պիտի մնան՝ պայմանագրութեան լրանալուն: Անոնք արդէն պիտի մնան Ազգին, օրէնքով: Եթէ մեր օրէնսդէտ վարչապետներն ու ժողովները զանց ընել կ'ուզեն Օրէնքին այս բոցորոշ արամադրութիւնն ի մտաւ Ազգին, պիտի ըսենք թէ իրենք Ազգին շահերը պաշտպանելու և պահպանելու յարմար մարդիկը չեն:

Վերջացնելով, կը կրկնենք ու կը պնդենք թէ, Ազգը պարտաւոր չէ լողարաններու համար տասնոց մ'իսկ ծախսել, և թէ՛ ասոր հակառակ կարգադրութիւն մը ընելը՝ ազգամիտս գործ է պարզապէս:

Յ. Գ. Փ.

ՀԱՅ ԿԵԱՆՔ

ՇԵՆՂԻԻ Ազգ. գերեզմանատան նախորդ տարիներու հաշիւներուն մէջ բաշտարութեան կարօտ չստ մը կէտեր զըտուելով, Տնտես. Խորհուրդը որոշեց կործին գեղեցական Բերայի Թաղ. Խորհուրդին, որ նորակազմ Գանձաժողովը փութացնէ պահանջուած հաշիւներու և տուժանքներու յանձնումը:

ՏՆՏԵՍ. ԽՈՐՀՈՒՐԴԷ, որ Ուր. գումարուեցաւ Ժրջան Տիար Թորգոմ Պոյաճեանի արտեսագրութեան ներքեւ, յետքնութեան դիտեց թէ, նախորդ վարչութիւններու օրով, Պատրիարքարանի մատակարարութիւնը, առանց Տնտես. Խորհրդի գիտակցութեան կատարուելու այս պատճառաւ վիճակին մէջ գոյացել է պարտուց խոշոր առաւելութիւններ, որոց մասին բողոքախառն դիտողութիւններ եղեր են արդէն ժամանակին, բայց մոռիկ ընող չէ եղեր: Իր դիտողութիւնները մընացեր են «Չայն բարբառոյ յանապատի»:

ՈՒՐՈՅՆ ԴԻԻԱՆ մը և միմիայն Տընտես. Խորհուրդին աշխատութեան նուերուած մնայուն Հաշուակալ-Քարտուղար մը և առ այս փոքրիկ յատկացում մը խնդրած է Խորհուրդը Քաղաք. Ժողովէն, որպէս զի իր քննութեան ներկայացուած մատակարարական խնդրոց բարդ հանգամանքով, ուսումնասիրութեան կարօտ հաշուեքնութիւնները խղճի մոտա կարելի ըլլայ կատարել:

ԲԱՆՈՒԻ Խոշմաթ պիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուան արձանադրուած կարդ մը ազգապատկան կալուածներու մատակարարութիւնը ժամանակին ստանձնած էին ճարտարապետ Տեարք Ասատուր

Արախանեան և Սիմոն Մելքոնեան: Տնտես. Խորհուրդը հրաւիրած է այժմ յիշատակելը՝ լուստարանութիւններ տալու յիշադ կալուածներու սեփականութեան մասին:

Տ. ՅԱԿՈԲՈՍ ՏԵՒԷՃԷՔԵԱՆ, Բերայի քահանայնէրէն, ընդի Պարտիզակցի, Ուր. օր յանկարծամահ եղաւ 67 տարեկան, սըրտի կաթուածէ: Չեոնադրուած էր 1891ին, հոգեւոյս Ալեքսիան Սրբազանէն: Ուսուցչական պաշտօններ ալ վարած է: Հմուտ երաժշտապէս էր: Երկիցս անդամակցած է Կրօն. Ժողովներու, և ներկայիս կ'անդամակցէր Շէնղիի գերեզմանատան Գանձաժողովին: Կը թողաւ այրին և աղջիկ դաւակ մը: Օծումը և յուզարկաւորութիւնը տեղի ունեցաւ Բ. օր. Ս. Երրորդութիւն եկեղեցին մէջ: Օծումը կատարեց Տ. Արարունի Սրբազան: Պատարակց Տ. Տաճատ Ի. Վ. Պատմաճեան:

ԵԼԵՒՄՏԻՑ Հոգաբարձութիւնը պատուանց Պատրիարքարանի յաջորդ տարեշրջանի պիւտճէին նախապիւր, ներկայացնելու համար Տնտես. Խորհուրդին:

ԳԱՏԸԳԻԻԴԻ Թաղ. Խորհուրդը պատուարուած է իր մէջ, վարժուէի և վարժապետի խնդրոյ մը պատճառաւ: Քաղ. Ժողովաց կողմանէ մարմին մը Գաղղիւզ գացած էր, համերաշխութիւն գոյացնելու համար, բայց կարելի չըլլալով, Քաղ. Ժողովը որոշած է Ասիմ. Թաղ. Խորհուրդ մը կազմել:

ԲԵՐԱՅԻ Ազգ. կալուածները, ըստ Քաղաք. Ժողովաց որոշման, պիտի շարունակեն կառավարուել ուրոյն Հոգաբարձութեան մը միջոցաւ: Պատրաստուեցաւ բարեփոխեալ նոր կանոնադր մը:

ՄԱՐՍԻԼԻՈՅ Օթթայ արուարձանին մէջ, Սեբաստիանոսեան նախաձեռնութեամբ Մանկապարտէզ մը բացուելու մէկ շաբաթուան մէջ 52 մանուկներ արձանագրուել են: Ծախքերը Սեբաստացիք հոգացել են, նուիրելով 5600 ֆրանք:

ՄԵՍՐՈՊԵԱՆ Ճեմարանն, որ ի Սօֆիա, իր 4րդ տարեշրջանը բոլորեց և այս տարի Ազգին նուիրեց 9 չըմանաւարաններ, 3 ը աղջիկ, 6 ը մանչ:

ԷՅՈՒՊԻ Թաղին և Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ՝ Կրօն. Ժողովի անդամ Տ. Սարգիս եպս. Տ. Սարգսեանի կատարած քննութեանէն հասկցուած է թէ, նոյն եկեղեցին վերջերս մի քանի բարեսէր անձերու շնորհիւ նորոգուած է, և հոն ի հարկին եկեղեցական պաշտամունք կը կատարուին, թէ ներկայ թաղականութիւնը և թաղէն հեռու գտնուող նախկին թաղեցիներ միշտ հոգածու կը գտնուին սոյն պատմական եկեղեցիին պայծառութեան: Եկեղեցին ունի քահանայ մը, եւ թաղեցիներու թիւն է 50-60:

ՅԻԱՆՍԱՅԻ Կաթող. Պատուիրակութիւնը Կառավարութեան մօտ դիմումներ կը կատարէ, որպէս զի իրաւունք տրուի նոյն պատուիրակութեան, լսելու ամուս-

նալուծման դատերն անոնց որոնք միայն եկեղեցական պատկով միացած ըլլալով, եկեղեցական օրինաց համաձայն ամուսնալուծման խնդրանք կը ներկայացնեն:

Պ. ՅՈՎՍԷՓ ԱՐՄԱՂԱՆԵԱՆ, դաշնակի վաճառական և դաշնաւորոյ ի Սօֆիա, Պուլկարիոյ Չարէն նուէր ստացած է իր ստորագրուած կենդանադիրը, ի նշան դուստնակութեան:

Պ. ՅԱԿՈԲ ՍԷՄԵՐՃԵԱՆ, Ատարազարցի բարեկիրթ երիտասարդ մը, հաղիւ երկու տարիէ ի վեր Պոլսէն մեկնած և Բաբիլ հաստատուած լքելու լուսանկարիչ, արդէն իսկ առաջնակարգ դիրք գրաւած է իր արհեստակիցներու մէջ, իր նուրբ արտագրութեանց շնորհիւ մեծապէս պնահատուելով և քաջալերուելով պաշտօնական շրջանակներէ և բարձր գոտակարգէն: Անձամբ ճանչցած ըլլալով զինքը, և իր բարեմասնութիւններուն տեղեակ, շատ ուրախացանք իր յաջողութիւնները լսելով, ուստի և մեր խնդակցութիւնը կը յայտնենք իրեն և իր պարագայներուն:

ՍԱՄԱԹԻՈՅ Երեք թաղերու Աղքատախնամ Մարմինն ստացած է հետեւեալ նուէրները.

Երուանդ Գաղազեան 100 ֆրանք:

Տօր. Ա. Էնֆիլէճեան և Միհ. Միսաբեան 200 աղան դր., Փիլիպպոս Պոյաճեան 150 դր., Աստիկ Մուրատեան, Քերովրէ Շալճեան, Համբարձում Անուշեան, Արտաշէս Դաշրճեան, Վերժին Այալեան, Համբարձում Սաթճեան, Հայկ Խորէնեան և Հայկ Չէօմէկճեան՝ 100 աղան դր., Արամ Միքիմանեան և Յակոբ Չիմէնեան՝ 50 աղան դրու:

ՊԱԳՐԳԻԻԴԻ Դպրաց Դասուն հաստատութեան 38 ըդ տարեգարձին առթիւ, վաղը, 29 Յուլիս, Տ. Սմբատ եպս. Գաղազեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ: Պաշտօն պիտի կատարուի Դպրաց Դասուն հին և նոր հանգուցեալ անգամներու հոգևոց համար, և այս առթիւ՝ Դպրաց Դասուն ութ անգամներու դպրութեան չորս աստիճանները պիտի տրուին:

ԳՆԱԼԸԻ Ներսէսեան Ազգ. վարժարանի ընթացաւարաններու հանդէսը տեղի պիտի ունենայ վաղը, ժամը 16ին, եկեղեցիի պարտէզին մէջ:

ՈՂԲԱՅԵԱՆ հանճարեղ բանաստեղծ Դանիէլ վարուժանի դուստրը Օր. Վերոնիկ, Ժրնէվի մէջ մասնաւոր գովեստով շահած է Զուիցերիոյ Երաժշտական Ճեմարանի երգի բաժնին առաջին մրցանակն ու չքանչանք:

ԽԱՐՏՈՅ Երգիծական շաբաթաթերթի 20րդ թիւը ստացանք: Կը հրատարակուի Բարիկ: Խմբագիրներն են Մ. Երիցանց և Կ. Պետուշ: Տարեկան բաժնեգինն է 30 ֆրանք:

ՍՏԱՅԱՆՔ Նիու Եօրք հրատարակուող Հայաստանի Կոչնակ Շաբաթաթերթին Յուլիս 16ի թիւը (27րդ Տարի, թիւ 29), որ ունի ճոխ և խնամեալ բովանդակութիւն:

ԱՆՏՈՒՆ ՏԸ ՊՈՒՆԵՎԻՍ

ՆՈՐԱՎԵՊ

ՅԵՏ ՄԱՀՈՒ ՓԱՌՔԸ

(Եւր. Տեղ թիւէն եւ վերջ)

Երբ մի քանի վայրկեան յետոյ Լիւսի վերադարձաւ, զարմանքի ազդակ մը արձակեց՝ դաշնակին տեղը պարագ տեսնելով։ Եւ որովհետեւ մանկամարդ աղջիկը, տրամադին կը յանդիմանէր իր եղբայրը, իր այս զոհողութեան համար, այս վերջինը գոհունակ ժպտի կեղծեց։

— Իմ դաշնակս 2000 Քր. չափով ծախեցի, յարեց։ Երբ մայրիկը ապաքինի, շատ զիւրաւ պիտի կրնամ ուրիշ մը գնել, բայց կարեւոր է որ ինքը չկասկածի բնու։

— Եւ եթէ հարցնէ թէ ինչո՞ւ չի նուազեր։

Էտուտ պատասխան չգտաւ նախ։ Յետոյ, ամենայն անհոգութեամբ ձեռքը օղին մէջ ձօնելով, պատասխանեց։

— Պիտի ըսես թէ մեր վրայի յարկը հիւանդ մը կայ։

Բայց Լիւսի համոզուած չէր տակաւին։

— Ի՞նչպէս պիտի աւարտես թատերակութիւնդ։ Դաշնակը շատ կարեւոր էր քիչի։

— Թատերգութիւնս աւարտած եմ արդէն։ Երաժշտական մասը միայն մնացած է։

Էտուտ ճամբարութիւնը չէր ըսած, որպէս զի քոյրը չմտահոգուի։ Տակաւին գրեթէ ամբողջ արարուած մ'ունէր պատրաստելիք։ Յաջորդ գիշերները, իր սենեակը փակուեցաւ իր գործը աւարտելու համար։ Բայց որքա՞ն պէտքը կը զգար իր դաշնակին օգնութեանը։

Վերջապէս Տիկ. Տ... ապաքինման շրջանը մտաւ, և երբ հարկ եղաւ իրեն խմացնել դաշնակին անյնապատմը, շատ ցաւ դգաց, մտածելով որ ինքն եղած էր պատճառ այս մեծ զոհողութեան։

— Մի՛ ցաւիր, մայր, բաւ լինէ Լուսու, անփոյթ երեւոյթով մը։ Երբ ներկայացնեն իմ թատերգութիւնս, շատով պիտի կրնամ դաշնակի մը զրամ չափ հիշնակի իրաւունքովս։

Եւ գեթազգութիւնը հոն էր որ անկեղծօրէն կը խօսէր նա։

Բայց այդ օրէն իրեն համար սկսաւ ցաւագին գողգոթայ մը։ Ամբողջ երեք երկար տարիներ, նա իր գործերը ներկայացուց թատրօններու ամէն տնօրէններու։ Մի քանիներ իր գրութիւնն իրեն վերադարձուցին, գոհնալով մի միայն անոր կցել սա հակիրճ պատասխանը։ «Ցաւ ի սիրտ»։ Ուրիշներ, զինքը մերժելու համար, մի քիչ աւելի քաղաքավարու

թիւն յոյց տուին։ Բայց գոհուեցան այն պիտիներ որ առանց խօսելու յայտարարեցին իրեն թէ իր երաժշտութիւնը երգուելու արժանի բան մը չէր։

Տարաբախտ երիտասարդն արդէն տարիներէ ի վեր կը տատաղէր սրտի հիւանդութենէ, որ վերջերս ծանրացած էր իր շտապանց աշխատութեան պատճառաւ։ Իսկ ուժղին նոպայ մը ունեցաւ այս մերժումներուն հետեւանօք, որ ա՛յնքան կը վիրաւորէր իր արժանապատուութիւնը։ Եւ երեկոյ մը իր անկողինի վրայ լնկաւ, ա՛նակի տատաղանքներու մէջ։

Յաջորդ օրը, մտահոգ հարցուց իր քրոջ։

— Եւ մայրի՞կը։

Քաջատարտ աղջիկը հասկցաւ, և կատակել կեղծելով։

— Կարող լինէ հիւսայ, բաւ ժպտելով։ Վաճառատան մէջ, ուր կ'աշխատիմ, գիշերները գրի մեքենայի վրայ յաւելուածական ժամերու աշխատութիւն մը ունիմ։ Հանգարտ եղիր, մայրիկը ոչ մէկ բանէ պիտի զրկուի։

Յետոյ, որովհետեւ յաջորդ օրերուն հիւանդութիւնը յառաջ կ'երթար, և բըժիշկը կը յայտարարէր թէ մի միայն մեծ երջանկութիւն մը կարող էր բարձրեւում մը յառաջ բերել հիւանդին վիճակին մէջ, իր մայրը և քոյրը ջանացին յուսադրել զինքը։

— Անմիջապէս որ ոտքի ելլելու կարող զգաս դուն զբեղ, պիտի վերստին գիմես տնօրէններուն։ Մինչև այն ժամանակ անպատճառ պիտի գտնենք աղջկցիկ մէկը որ պիտի գիտնայ հասկցնել իրենց թէ՛ ո՛րքան սխալ գաղափար կազմած են քու գործիկ մասին, ըսին իրեն։ Բոլոր մեծ երաժշտագէտներ իրենց սիրգբնաւորութեան մէջ ունեցած են այս զրգուարութիւնները։ Յիշէ՛ ձրաճքը, Պիգէն, Սալօն և ա՛յնքան ուրիշներ։

Երիտասարդը, որուն մէջ յոյսը ծնած էր վերստին, թեթեւ բայւորութեամբ զգաց, և թէպէտեւ ելնելու անկարող կը զգար ինքզինք, թուղթ և մատիտ խնդրեց, ըսելով թէ կ'աղէր նոր գործ մը գրել։

Բայց քիչ վերջը, մայրը տեսնելով որ անոր գէմքը կ'այլալէր իրօք ըրած մեծ ճիշդէն, մտահոգուեցաւ և խնդրեց իրմէն որ հանգիստ բնէ։

Ո՛չ, մայր, բաւ նա, բուն շարժում մը բնեղով։ Գեթ ուզեր գործս կիսաւարտ թողուլ։

Եւ որովհետեւ մայրը, չհասկնալով, զարմացած իրեն կը նայէր, տխուր ժպտով մը ունեցաւ և մրմնջեց։

— Պիտի կրնամ աւարտել, աւա՛ղ։

Տիկ. Տ... և Լիւսի նշմարած էին թէ, անմիջապէս որ իրենք կը մօտենային անկողինին, հիւսանքն այնպէս մը կ'ընէր որ իր գրածը ծածկուէր իրենց աչքերէն։ Նայն իսկ, երբ քնանալու պատրաստուէր, բարձին ներքեւ կը պահէր թուղթը։

Այն ժամանակ, անոնք խորհեցան։ Անտարակոյս կ'սպասէ որ ապաքինի, որպէս զի իր գործը նուազելով անակնկալ մը պատճառէ մեղի։

Բայց, առաւօտ մը, երբ իր սենեակը մտան, մեծ ճիշ մը արձակեցին։ Էտուտ, գլուխը տապալած բարձին վրայ, մէկ ձեռքով տակաւին սեղմած այն թուղթը, որուն վրայ չէր զգրած մի քանի օրէի վեր տեղագրին գրելէ, կը քնանար մահուան անշարժութեան մէջ։

Եւ, յուզումէն խելայել, անոնք կարգացին առաջին էջը։

« Կը խնդրեմ Պ. Ֆլամանէ, իմ ամենափոքր զարպեալս, որ ինքը միայն ուզեց հաւատալ իմ տկար տաղանդիս, որ իմ յուզարկաւորութեանս ընթացքին նըւազէ այս մեռելական երգը, իմ յետին գործս։

Այս թաղման երկը յայտնութիւն մը եղաւ ունեղիշներուն։ Թերթերը միաձայնութեամբ իրր զլուս զործոց մը հրաչակեցին զայն։ Եկան գտան Տիկ. Տ... նա։ Հարցուցին իրեն թէ իր աղուն ուրիշ հեղինակութիւնները չունէ՞ր։ Եւ սզակիր մայրը անոնց տուաւ այն թատերգութիւնն, զոր այնքան տնօրէններ արհամարհնօք մերժած էին։

Մի քանի ամիս վերջ, այդ թատերգութիւնը կը ներկայացուէր Բարիզոս ամենաառաջին թատրոններէն միոյն մէջ, ահագին յաջողութեամբ, և մին անոնցմէ որ այս գործը աններկայանելի էր հռչակած, ներկայացումին վերջաւորութեան, յարեց, տխրօրէն շարժելով գլուխը։

— Ո՛րքան ամօթ և անարդարութիւն է. մարդոց տաղանդը մի միայն իրենց մահուանէն վերջ է որ գիտենք գնահատել։

ԱՐՄԵՆՈՒՅԻ ՖԵՐԶԱՏԵԱՆ
Գաւթիկ

ԱՐԶԵՍ ԸՄՊԵԼԻՆԵՐ ՊԱՏԱՍԵԼՈՒ

Նարեզովի (fharuso) — Երբ նարեզով կ'ուտէք, զանազան սակեցէք այն գեղին նուրբ մակակեղեւը, որ կը ծածկէ սպիտակ թանձր մորթը։ Չորացեցէք մակակեղեւները, յետոյ փոքրիկ հնոցի մէջ գրէք որ խանձին՝ կարմրին։ Անվերջ կըրնան պահպանուիլ զոց չիշերու մէջ։ Այս մակակեղեւներէն 50 կրամ պէտք է 15 օրի մը չափ գնել մեկ լիտր ալքոլի մէջ, հետը միասին 1 կրամ դարձ (դարձիկ), և նոյնքան մեխակի զլուս (գարեկիկ), ապա տենա տենա երերցնելով և տաք տեղ մը դնելով խառնուրդը։

Խառնուրդէն կը զատեն նիւթերու մը նոցրոգները և մէջը կը լեցնեն օշարակ մը, որ պէտք է չինուած ըլլայ 250 կրամ չաքարով և կէսէն մինչեւ մէկ լիտր ջուով, փափաքուած ալքոլի ուժին համեմատ։

Երբ Բաբելոնի մարտիկները հասնում էին Բաբելոնի դռներին, նրանք հանդիպում էին Բաբելոնի քաղաքի քաղաքապետին, որը նրանց հարցնում էր, թե ինչու են նրանք գալիս Բաբելոն:

ՀԱՅԿԱՅԻՆ ԴԱՐԱՆԻ ՊԵՐՏԻՆԻ

Գրանքն «Արքայադավաճախ»-ը հանդիսանում է իր ժամանակի հայտնի գրողներից մեկի՝ Գրիգոր Բաղդասարյանի անհայտ գործերից մեկը։ Գրքի հեղինակը ինքն իր անունը չի դրել գրքի վերջին տողի վրա։ Գրքի հեղինակը հավանաբար չի ցանկանում, որ իր անունը հանդիպի իր գործերի հետ միասին։ Գրքի հեղինակը հավանաբար չի ցանկանում, որ իր անունը հանդիպի իր գործերի հետ միասին։

Վազարը վազին տալի՛լ ճի՛ծ յալ՝ «Ժե, դը, «Հ,ս, չե՛լ
«Վը, թսմումվի՛ր • Բա՛լիմ մաղկումա՛ն, գչո՛ղլաթս • «մզվմն տոհմը՛
«Դը, վ իս.թլ : Նվի՛հվ, մտ • Կ Բոտսոն «Վը, թսմումվի՛ր —

[illegible]

— 17 —

[illegible]

ՀԱՅԺԱՓԱՐԻ ՄԻ ԼՓՆԱԾՈՒ

դիտարկելով, որ «մյուս հիմնական մեծ նպատակն
«ԳՆՏ»-ի կողմից միջազգային մակարդակի վրա շահերի

։ Բոկի ժողովն Դանկեանսդ մը իստեւ-ուղատով վկայի
մասնաւ գլխակիւնէնդ՝ մի ' չքի' հոստան մի վն գտտի, ---

Հովհաննէս Բաղդաճան

‘տատջատուն չգլ’ Դ ‘գլ չեղի ց/լուցվումով’ • Խ —

։ Դիտո վափն ոչնչեւ պիտոյվտմտի • Եւ մմդդմվիտե
 ռոնոմչ մվ դտդչրստնո մս չպվ ռտոմ դմսրտտոյ —

: သို့မဟုတ်

ՀԱՅԺԱՊԿԱՎ ՎՄՈՂԺԱՂՆ Ե՛ ԽԱՂԵՑ ԺԱՌՈՒՆԺԱՊԵՆ ԿՂԴԿՐԱՍ

— 42 —

— 46 —

կ'ողաչեմ, պարո'ն, մի' րաչք որ նոյն ինքն Աթոս վի-
րաւոր է, պիտի յուսահատի եթէ իմանայ որ այս բանս
թաղաւորին տկանջը հատեր է, և որովհետեւ վերքը
չառ ծանր է, քանի որ ուսէն անցնելով կուրծքը հա-
սած է, վախ կայ որ ... :

Նայն միջնոցին դրան սրակապանը վեր առին, և ազնիւ. ու գեղանի դուռն մը, թէև ստակալի կերպով զուհատ՝ ծուպին տակէն երեւցաւ :

— Աթո՛ս , դռնեցին երկու հրաքանակիւրները :

— Աթո՛ւս , կրկնեց նոյն խնդն Պ . տը Դրէվիլ :

— Ձիւ ուղեր Էք, պարո՛ն, ըսաւ Աթոս Պ. տը Դրէ-
վիլի, տկար ալ լիովին հաճաբար ձայնով մը. ընկեր-
ներուս խօսքին նայելով՝ զիս կանչեր էք, և կը փու-
թամ հրամանիկ կատարելու. ահաւա՛ստիկ եմ, պարո՛ն,
բան մը կ'ուզէի՞ք:

Հրադանակիրը՝ այս ըսելով՝ ըստ սովորականին մա-
քուր հագուած շորւած¹, անյովղողդ քայլով Պ. տը
Դրէվլիի զահլիճը մտաւ : Պ. տը Դրէվլի այս քաջու-
թեան նշանէն սրտովին յուզուած , գէպ անոր ընդ ա-
ռած պնաց :

— Այս պարուններուն կ'ըսէի, յարեց նա, որ պարսկ տեղ իրենց կեանքը վտանգի մէջ չդնեն, վասն զի այս արի մարդիկ թագաւորին սլրելի են, և թագաւորն ալ դիտէ որ իր հրացանակիրներն աշխուհի ամենէն լաջ մարդերն են: Աթո'ս, ձեռքդ տուր:

Եւ Պ. որ Դրեմիկը՝ նորեկ հրացանակրին այս սիրտը նշանին չսրտաախանած, սնորհ աջ ձեռքը կը բռներ եւ բոլոր ուժովը կը սեղմէր, առանց գիտելու որ Սթոն՝ որչափ ալ ինքն իր վրայ կ'իշխէր, վշտակիր շարժում մը կ'ընէր սակայն եւ ալ աւելի կը գեղնէր, ինչ որ անհասարախ պիտի կարծուէր :

— 43 —

կրօնական հալոցւածար քեզ աւելի կը վայելէր: Իսկ դո՛ւ,
Բորթոս, այդ կամարդ կապիր ես՝ յարդէ՞ սուր մը կա-
խելու համար անկէ: Հապա Սթո՛ս , Սթոսը չեմ տես-
ներ, ո՞ւր է:

— Պարոն, պատասխանեց Արամիս տրամադրին, հիւանդ է, չատ հիւանդ:

— Հիւանդնո՞ւմ, շատ հիւանդ է, կ'ըսես. և ի՞նչ է հիւանդութիւնը :

— Կը վախցուի որ ծաղկի հիւանդութիւնն ըլլայ, պատասխանեց Բորթոս՝ ինքն ալ իր կարգին խօսք մը ըսել փափաքելով, և իրօք ցաւալի բան մը պիտի ըլլայ, վասն զի երեսը պիտի աւրուի անուշտ:

— Ծաղկի հիւանդութիւն. Բորթո՛ւ, դարձեալ պար-
ծունակ պատմութիւն մը կը պատմես ինձ: Այն տարի-
քին մէջ ծաղիկ ունենա՛յ, կարելի չէ . . . բայց ան-
շուշտ վիրաւոր՝ թերեւս սպաննուած է: Աստուած
վկայ . . . եթէ գիտնայի. դո՛ւք, հրացանակիրներ, չեմ
ուզեր որ գէշ տեղեր յաճախէք, փողոցը կռիւի բըռ-
նութիւք և քառուղիներու մէջ սրով խաղաք: Մէկ խօս-
քով, չեմ ուզեր որ Պ. կարտինալին պահապան զօրաց
ծաղր ու ծանակ ըլլաք, որոնք քաջ, հանդարտ, ճար-
պիկ մարդիկ են, բնաւ ձերբակալուելու առիթ չեն տար,
և ի հարկին անձնատուր ալ չպիտի ըլլային: Լաւ-
ագոյն պիտի համարէին տեղւոյն վրայ մեռնիլ քան թէ
քայլ մ'ընկրկիլ: Խոյս տալ, փախչիլ, միայն թագա-
ւորին հրացանակիրներուն յատուկ գործեր են:

Բորթոս և Արամիս կատաղութենէ կը դողային։ Եւրաբակամ կը խեղդէին Պ. տը Դրէվլին, եթէ չըզգային որ իրօք իրեց վրայ ունեցած սէրն էր որ այսպէս խօսել կուտար անոր։ Ուրքով զեանին կը զարնէին, ա-

ՏՈՄԱՐՆԵՐՈՒ ԿՈՐՈՒՍՏ

Ազգ. Հիւանդանոցի Հանդերձա-
տան արձանագր. տուժարին կորսը-
ւած, եւ որուն հետեւանքով՝ գոյքե-
րու քանակն անորոշ մնացած ըլլալը
գրեցինք արդէն: Ասիկայ յայտնուած
է Յիւ. 18 ին, Ս. Պատր. Հօր եւ Հոգա-
բարձութեան այցելութեան առթիւ:

Կը հաւատեն թէ Հանդերձատան
պետը յատուկ տրամադրելու մէջ խը-
նամքով մի առ մի կ'արձանագրէ եզեր
ամէն հաշիւ եւ գոյք: Աւթ ամիս առաջ
հրաժարելով, տոմարներն ու հաշիւ-
ները յանձնէր է Տնօրէնին, եւ հիմա
կ'ըսուի թէ տոմարները կորսուել են
եւ գոյքերու քանակն անյայտ կը մնայ:
Ի՞նչպէս կ'ըլլայ այդ:

Երբ քննադատենք, գործի պոլիս
գտնուողներ ցաւ կը զգան: Երբ քըն-
նադատութիւններ տեղի չունենան,
այսինքն երբ գործուած անկարգու-
թիւններն աննկատ անցնին, սանձար-
ձակութիւնները մեծ քայլեր կ'առնեն
եւ անդարմանելի վնասներ յառաջ կը-
բերեն: Իր պաշտօնին պարտականու-
թիւնն ըմբռնող խմբագիր մը չէ կարող
լուի համայնքին վնաս պատճառող ա-
րարքի առջև: Ազգին տունը հոգածու
ձեռքերու մէջ չէ, ինչպէս կ'երեւի:
Հանդերձատան տեսչականներն ի՞նչպէս
կ'անհետին, եւ ի՞նչպէս կ'ըլլայ որ ա-
սիկայ 8 ամիս յետոյ երևան կ'երևէ:
Այդ 8 ամիսներու մէջ, այդ տետրակ-
ներուն պէտքը չը զգացուեցա՞ւ եր-
բէք: Կարելի բա՞ն է:

Կը հարցնենք թէ Հիւանդանոցի Հո-
գաբարձութիւնը ի՞նչ կերպով, ի՞նչ մե-
թոտով կը կատարէ իր հսկողի պարտա-
կանութիւնը, որ ամբողջ ութ ամիս ա-
ռանց հակալիճի կը մնան Հաստա-
տութեան գոյքերն, եւ ինքը տեղեկութիւն
չունենար:

Մենք մեր քննադատութիւնը ներքին
Տնօրէնին չենք ուղղեր, այլ ուղղակի
Հոգաբարձութեան կ'ուղղենք, որովհետեւ
այս վերջինն է պատասխանատուն Ազգին
ածջիւ: Ամսականաւոր պաշտօնեաներու
վրայ հսկողութիւն ի գործ դնելու պար-
տականութիւնն իրն է, եւ այս պարտա-
կանութեան մէջ թերացումը կամ անհո-
գաթիւնը՝ ծանր հետեւանքներու տեղի
կուտայ: Ազգին Տան հոգածութիւնը՝ ա-
նանկ ունելիլն ծայրովը բռնուելիք գոր-
ծերէն չէ: Ուղղակի հսկողութիւն ի գործ
դնելու համար տրամադրելի լայն ժամա-

նակ չունեցողը՝ բաւական խղճամբա
ըլ-
լալու է, Հոգաբարձութեան պաշտօն չըն-
դունելու համար: Անուանական պաշտօն
եւ ալ կրնամ կատարել, մամիկա ալ: Ազ-
գային որ եւ է պաշտօն ստանձնողը պէտք
է հոգաւ մարմնով փաթի անոր: Եթէ չի
կրնար, պէտք է քաշուի, տեղ տալու
համար աշխատելու ժամանակ եւ արամա-
դրութիւն ունեցողներուն: Մեզի կը գոր-
ծեն անոնք որոնք լսի փառքի համար
պաշտօն կը ստանձնեն: Մեր խօսքը միայն
Հիւանդանոցի համար չէ, այլ ազգային
ամէն տեսակ պաշտօնի համար բնորոշու-
մի կերպով:

Հիմա ի՞նչ պիտի ըլլայ Հիւանդանոցի
Հանդերձատան այս խնդիրը: Հոգաբար-
ձութիւնը միջոցներ ձեռք առա՞ւ դոնէ:
գոյքերուն պահպանութեան, տուժարնե-
րուն երեւան հանուելուն եւ մատակարա-
րական գործին մէջ կանոնաւորութիւն
հաստատուելու համար: Հանրութիւնը իմա-
նալու հետաքրքիր է:

ՄԲՈՐԸ ԵՒ ՖՈՒԹ-ՊՈԼԸ

Սրօր, որ Բժշկական Կաճառներէն
ընդունուած է իբրեւ առողջապահութեան
ազգակ եւ շատ մը հիւանդութիւններ կան-
խելու միջոց, արդարացուցած է սա ոսկի
խօսքը. «Առողջ մարմնի հետ՝ առողջ միտք»:
Սրօրը սկիզբէն արդէն իր գոյութիւնը եւ
կարեւորութիւնը գգայի ընկ տուած է:
Պատմութեան մէջ, հին ազգերու յառ-
կացուած քաղաքակրթութեան եւ զարգա-
ցումի բաժնին մէջ լայն էջէր գրաւել
տուած է: Արդ, մի եւ նոյն Սրօրն է որ
հետզհետէ ժամանակներու ընթացքին բա-
րեփոխուած՝ գիւրացած է, եւ ներկայիս
Սրօրի խաղերը թէ՛ հոգեկան գուարթու-
թիւն եւ թէ՛ մարմնի մարմնի գարդաշու-
մի կը պարգեւեն:

Սրօրի խաղերէն ամենէն հանրածանո-
թիւ եւ հետաքրքրաշարժներն են Ֆութ-
Պօլը եւ Պօքը, մանաւանդ Ֆութ-Պօլը:
Միջազգային հարց մը եղած է թէ՛ որ
երկիրը ամենէն լաւագոյն Ֆութ-Պօլ խա-
ղացող թիւ մ'ունի: Իւրաքանչիւր երկիր
ներկայիս աշխատութիւն, ճիւղ, ինամք
եւ գրամ կը թափէ իր մէջէն լաւագոյն
խաղացողներ հասցնելու եւ Միջազգային
մրցումներու մասնակցելու համար:
Բաղձաթիւ Սրօրի հանդէսներ կը հրատա-
րակուին, որոնք Սրօրը աւելի յառաջ տա-
նելու, զարգացնելու համար անգուլ կաշ-
խատին: Թուրքիա եւ քաջ ֆութպօլիստ-
ներ հասցնելու համար Զանք չի խնայեր
ունի լաւ խաղացողներ, որոնք Միջազ-
գային Tournoinներու մասնակցած եւ լա-
ւարդիւնքներ ձեռք բերած են:

Այս պահուս քաղաք կը գտնուի վի-
էնիս բնակող Զէյնբու. «Ֆութ-Պօլի» դօ-

րաւոր խումբը, «Սլօվան», որ առաջին առ-
թիւ անցեալ Ուրբաթ (Յուլիս 22) Սթա-
տիօմի դաշտին մէջ խաղաց մեր զօրաւոր
խումբերէն «Կալաթա-Սէրայ» ի դէմ եւ 2
կօլի դէմ 3 ով յաղթական հանգիստացաւ:
Կիրակի օրը (24 Յուլիս) «Սլօվան» կրկին
խաղաց մեր զօրաւոր եւ հոյակապ խում-
բին՝ «Ֆէնէր-Պաղլէ» ի դէմ, եւ 3 կօլի դէմ
3 ով հաւասար մնաց:

Յառաջիկայ Ուրբաթ կրկին Սթադիօմի
մէջ «Սլօվան» (29 Յունիս) պիտի մրցի
մեր ամէնէն լաւ խաղացողներէն կազ-
մուած «Սաոն-Խումբ» ին դէմ:

Մեր «Սաոն-Խումբ» ը ցարդ քաղաքս
եկած բոլոր Եւրոպացի զօրաւոր խումբե-
րու հետ մրցած եւ գրեթէ բոլորին դէմ
յաղթող հռչակուած է:

Յոյսով ենք թէ «Սլօվան» ալ Ուրբաթ
օրը միւս խումբերու բաղձին պիտի ար-
ժանանայ:

Կ'առաջարկենք մեր նորահաս երիտա-
ւարդներու որ առանց առիթը փախցնե-
լու «Նոր-Շիշլի» մարմնակրթական միու-
թեան արձանագրութիւն: Անոնք իրենց
արամազրութեան տակ պիտի գտնեն՝
«Սթատիօմի» ի ընդարձակ չէնքին մէջ
լայն սրահ, Սրօրի խաղերու պէտքեր եւ
մանաւանդ Ֆութ-Պօլ:

ՈՍԿԻԱՆ

ՎԱՅՐԱՄ ՍԻԶԵՆԻՃԵԱՆ

Գնում, Վաճառում եւ Նորոգութիւն
Ինքնաշարժերու (Օթօ)

Մի՛ գներ Օթօ, մի՛ ծախիր Օթօդ, ա-
ռանց նախապէս միզ տեսնելու, եթէ
կ'ուզես շահաւոր գործ կատարել: — Վը-
ճարման գիւրութիւններ: — Ծախու պատ-
րաստ զանազան քամիօններ:

Հասցե. — Բերա, Բանկալի Համամ,
Սադաի փողոց, Թիւ 1:

ՓԱՆԳՐԱՇԵԱՆ ԳՐԱՏԱՆ ՄԷՋ

ԿԸ ԾԱԽՈՒԻՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐԲԵՐԸ

ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉ ԱճՂ. ԼԵՂՈՒԻ, ԹՈՐՈՒ-
ԵԱՆ. Բ. Տիպ, վերաբնուած, նոխացած
եւ աւելցած. Էջ 736. Ամերիկեան տիպ:
Ուսուցչական ամենէն վերջին մէքոսով
3 ոսկի

ԲԱՌԱՐԱՆ ԱճՂ. Հայ. եւ Հայ. ԱճՂ.
հեղինակ Երան. Ամերիկ. տիպ: 3 ոսկի
ԱՌԱՋՆՈՐԳ ԱճՂ. ԼԵՂՈՒԻ, ՄՈՒՐԱՏ-
ԵԱՆ. Ա. տիպ 25 դր. Բ. տիպ 30 դր.
ՀԻՋՈՒԻԹՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒՄԵԱՆ Լիակա-
սար եւ ժամանակագրական Պատմ., իրենց
ոնիրներով, ամբարշտութիւններով եւ ար-
ստականներով. Լեօ Թափիլ. Թրգ. Գ. Գ. Փ.
20 դր.

ԼՈՒՍԱՆԿԱՐՁՈՒԹԵԱՆ Արուես, Բա-
բարեան. 10 օրէն ուսանելի, 20 դր.
ՊԱՏՄ. ՖՐԱՆՍ. Յիլափոխութեան.
Թիւ. 5 Հասար: 500 դր.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Քանի մը ցիրուցան սապանագլխեր
Վենետիկեան Միխիթարեան Հայրերու
Բ.

Ս. Ղազար վանքի ննջեցելոյ տևարին արձանագրութեան համեմատ, վենետիկեան Միխիթարեաններէս քանի չոր թաղուածներ կան Բանկալթիի գերեզմանատան մէջ, որոց տապանաքարերէն, ինչպէս ըսինք, երեքը միայն հնարաւոր եղաւ գտնել: Սակայն միանգամայն տեղեկութիւն ունենալով որ, հան թաղուած Հայ կաթողիկէներու գերեզմաններէն մաս մը իրենց կենդանի մնացած ազգականներու կողմէն ժամանակաւ փոխադրուած է դէմը գտնուող Կաթողիկէ Հայոց Ս. Յակոբ Անկիւանցի պարտիզին մէջ, այցելեցի հոն ալ, յուսով գտնելու մի քանի տապանաքարեր Միխիթարեան Հայրերու: Դժբախտաբար հոս ալ անհետացած է անոնցմէ չատր, թաղուելով պարտիզի հողին տակ, իսկ մնացած տապանաքարերը չէնքին մէկ գաւթին մէջ ամփոփելով՝ իրել յատակի քարեր կարդաւ պատկերացներ են գետինը քով քովի, իսկ Աստուած պիտէ ո՛ւր մնացած ըլլալը անոնց ննջեցեալներու ամբիւններուն:

Մէկիկ մէկիկ աչքէ անցնելով հաւաքուած տապանաքարերս, կը գտնեմ Միխիթարեան միաբաններէս Եսայեան Հ. Կարապետ վրդ, ի տապանագիրը, փորագրուած ձեռմակ մարմարիտնի վրայ, զոր կը կարդամ հետաքրքրութեամբ և սրտի դոհունակութեամբ:

Եսայեան Հ. Կարապետ վարդապետն, ինչպէս ծանօթ է, եղած է Կաթողիկէ Հայոց Աղղապետ-Պատրիարքը, ու վարած է այս պաշտօնը ամբողջ ինը տարի (1836—1845):

Ահաւասիկ անոր գեղեցիկ տապանագիրը, զոր գրած է Հ. Եղուարդ արքեպս. Հիւրմիւլեան իր անոյ լեզուով, որ եւ տպագրուած է «Տաղք Միխիթարեան Վարդապետաց» հաւաքածոյի Գ. հատորին մէջ:

Բարուն Կարապետ սանէն Եսայեան, Վանացն որ ի վեհ Ուխտին միաբան. Բզկոնսն բնդ վարժից ամուլըս չբնաղ Զրգեալ միալուծ յամբիծն իւր կեցցաղ Բարունապետն ըզնէս երկնքնայ Աբար և ուսոյց փառոգ վիճիւնաց: Ի Բիւզանդիոն ի բնիկն իւր փաղափ Կացեալ Ազգապետ բնդ ամս իննեքեալ, եւ զխաղաղութիւն սյարգիւ երկնասուր Բնդ արդարութեան ամեալ ի համբոյր Հրաժեշտ ի պաւսուոյն յաւգոր արեւոյր Զառաւելագոյն եւ ազգին յօգուս (*):

(*) Այս տողս «Տաղք Միխիթարեան Վարդապետաց» հաւաքածոյին մէջ փոխուած է հետեւեալ կերպով. Եւ ըղձակեղեղեալն յազգին իւր յօգուս:

Բզկոնսն աստ վեհն այս ծածկի զանիւն, Հիւրդ ըզլիւսակ օրհնեալ զարդարոյն:

Վախճանեալ տմայ ԿԸ

Ի 15 Յունուարի 1847

Տարի մ'առաջ Կառաւի մը շինութեան համար Ս. Յակոբ Անկիւանցի պարտիզը փորուելով՝ հողին տակէն երեւան եկան մի քանի նոր տապանաքարեր, որոնցմէ մին է վենետիկեան Միխիթարեաններէս Շէրպէթեան Հ. Վանիէլ վարդապետին տապանագիրը, որուն լոգօրինակութիւնը ահաւասիկ:

Այս է սապան Քանիէի Մեծապատիւ վարդապետի, Զաւակեաց մեծ Աբրաիմ: Որ ի Վանաց Սուրբ Ղազարի: Որդի եր սա Տէր Գրիգորի: Որ մակաւնուար եր Շէրպէթի, եղեալ ծնունդ մեծի Պօլսի Յուրում եաւ գեյս օրհասի: Վախճանեցաւ ի սան Տիւղեանց Առ Հիւրմիւլեան Անուրէի:

Յամի Տեառն 1795 — ՌԻՄԻԴ, 10 Կոստ. է.

Ի հասակի կ'ամայ

Հ. ԵԲՐԵՄ Ի. Վ. ԱՊՐՈՅԵԱՆ

ԻՆՉ ՊԵՏԷ ԸՆԵԼ
ՄԻՆՉԵԻ ԲԺԻՇԿԻՆ ԳԱԼԸ

ԹԱԼՈՒԿ, ՄԱՐՄՐՈՒԿ

Թալուկը (Syncope) գիտակցութեան կորուստն է, որուն անակնկալ կերպով կ'ենթարկուի՝ երեւութապէս ստող մարդ մը: Թալկացած մարդու մը շուրջ ընդհանրապէս տեղի կ'ունենայ յիմարական եւ անտեղի իրարանցում մը: Սորվեցէք արդ թէ ինչ ընել պէտք է այսպիսի պարագայի մը մէջ, և գործելու ուղղութիւնը ձեռք առէք:

Պատկերացէ՛ք հիւանդը, ո՛ւր որ ալ ըլլայ, հորիզոնական դիրքով և զլուխը ցած: Աղէկ միտք պահեցէ՛ք, զլուխը ցած, ամէն բան ասկէ կախում ունի: Թալուկը յապաջ կուգայ ուղեգային անարիւնութենէ. ուրեմն արիւնը դէպ ի գլուխն իջեցնելու է: Ասիկայ ա՛յնքան կարեւոր է որ, յաճախ, զլուխը ցած կամ կախ դիրքի մէջ դնելը միայն կը բաւէ որ հիւանդը վերստանայ իր գիտակցութիւնը:

Այս պիտաւոր գործողութեան վրայ աւելցուցէք մէկ քանի փոքր խնամքներ ևս: Սենեակին օդը փոխեցէ՛ք: Հաղուստներուն կապերը քակեցէ՛ք: Պաղ ջրով թրջած լաթով մը թեթեւ մը ձողկեցէք մարմինը: Արիւնը դէպ ի ուղեղը հոսեցնելու նպատակաւ միշտ, վեր առէք հիւանդին սրունքները:

Եթէ թալուկը երկարի, — ինչ որ հազուադէպ է, — պէտք է մեծ միջոցներու դիմել. արուեստական շնչառութիւն. լեզուն՝ լաթով մը բռնելով՝ զգուշաւոր կերպով քաշել, մարմինը շփել, և այլն:

Երբ հիւանդն ինքզինքը գտնէ, կրնաք սրտի կազդուրիչ դեղ (cardial) մը տալ իրեն, բայց միայն երբ գիտակցութեան եկած է, որովհետեւ հակառակ արտադրային կրնայ ծուռ կլնել:

Բայց, կը կրկնեմ, զլուխը ցած դրուելու է կարեւորը: Պէտք է այնպէս մը պատկերացնել որ զլուխը մարմինին մակարդակէն վար ըլլայ: Պիտի տեսնէք անմիջապէս որ գէմբը պիտի կորսնցնէ իր մեղրամտի գոյնը և խոր շնչառութիւն մը պիտի իմացնէ ձեզ թէ կեանքը կը վերադառնայ:

Թալուկ մը, որ այս միջոցներուն ստեղծ տեղի չի տար, գործարանաւորութեան ծանր խանգարումի մը նշանն է:

ՂՈՒՄՆԻՆ ՀԾՏ

Ա՛ն, լուսնին տակ կարելի չէ
Որ յոյզ մը մուր բեզ չի սանօք.
Իսկ երբ կայ սէ՛ր ...
Ու մուր աչեք
Այդ բոպիկն
Քեզ կը նային,
Երկինքն ի վար կարծես կ'իջնայ
Քիչ քիչ անկունն հոգւոյդ վրայ ...:
Մարտէյ ՍԻՎԱ ՇԱՀՐԻՄԱՆ

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

ԲԵՐԱ, ՊԱՐԵԱՄ ՓՈՂՈՑ

Քարաշէն 11 սենեակ, ջրամբար, հոր, ելեկտրականութիւն, լողարան, եւ այլն: Դիմել Փալազեան Վրաստուն:

ՇԱԲՈՒԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ

ՅՈՒԼԻՍ 28 — ՕԴՈՍ. 3

- 28 Եւ. Ս. Եսայեայ մարգարէին: (Մն. Լս. Ժ. 14. բ. 8):
- 29 Ուր. Պահ:
- 30 + Եր. Սբն. Թադեոսի եւ Սանդիսոյ կուսին: Իսկեվելի եղեմ իւ պահուր (Սամ Եղի):
- 31 Կիր. Բ. զկնի Վարդավառի: Յն. Բրկ. Ս. Ամ. ամնի: Հարսանիք:
- 1 Բւ. Սբն. Կիպրիանոսի եպս. եւ 45 վկ. եւ Սբն. Կուս. Յուսիսեան եպ. եւ Գրիսիսեան:
- 2 Գւ. Սբն. Աբանապի. եպս. եւ 10 աշակեհաց եւ 5 վկայիցն:
- 3 Գւ. Պահ:

ՏՊԱԳՐ 3. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ